

Առանձնապէս ուշագրաւ է Ս. Խաչ անուն Գազկաշէն տաճարի նկարագրութիւնը, որի մանրամասնութիւններից անտարակոյս պիտի օգտուի առհասարակ հայ գեղարուեստի և մասնաւորապէս հայ ճարտարապետութեան պատմութեամբ զբաղուողը:

Հաւաքաւանքի ձեռագիրը պատկանում է Ղազար անուն մի գրչի, որ ինքն իրան անուանում է «յոյժ տկար» և «անարհեստ»: Նա եղել է մի բարեպաշտ նաւավար, որ հազիւ գրել կարդալ է իմացել և այս աշխատութիւնը գրի է առել հաւանօրէն իր ծերութեան հասակում, որով միայն կարելի է բացատրել բազմաթիւ մոռացութիւններ, նոյնիսկ թուերի կարգի մէջ, որ պատահում են ձեռագրում: Այս նաւավար Ղազարին չպէտք է շփոթել մի ուրիշ Ղազարի հետ, որ եղել է աբեղայ, և որի գրչին է պատկանում գործիս վերջում ներմուծուած ոտաւանաւորներից մէկը—«Ամենայն ազինք՝ ակնաբլեալ ի յիս՝ . . . »: Սոյն ոտաւանաւորը, թէև ստրկական հետևողութիւն Շնորհալու «Աշխարհ ամենայն»ի, գրուած է մաքուր և կանոնաւոր հայերէնով և ուղղագրութիւնը գերծ է սխալներից: Գալով մեր նաւավար Ղազարին՝ նրա տգիտութիւնը ցաւալի լինելով հանգերձ ունի այն առաւելութիւնը, որ, նոյնիսկ իր սխալներով, շատ բան է ուսուցանում մեզ իր դարի աշխարհաբարից:

Մի ուրիշ արժէքաւոր հանգամանք, որի համար յատկապէս տողերիս գրողն իբրան չափազանց երախտապարտ է զգում սոյն համեստ գրչի հանգէպ, այն մի քանի տօնողերն են, որոնցով նա երկիցս տեղեկութիւն է տալիս Հաւաքաւանքի նախատիպն հանդիպացող երկու հին ձեռագրերից հնագոյնի մասին: Ղազարը տեսել է կամ գէթ լսել է մի ձեռագրի մասին, որ «մագաղաթի վերայ գրեալ էր երկաթագրով, նշանագրով գաւազանակիւ պրով»: Վերջին բառերը որ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, անշուշտ Ղազարի ժամանակ, գէթ վաճառական շրջաններում տարածուած տերմիններ են եղել, մինչ այն աստիճան, որ մի նաւավար անգամ անծանօթ չի փնայել նրանց և